

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 13

15 Հոկտեմբեր 1891



ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈՒԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ Է. արարողութիւնը ժամատեղեաց: (Շարայարութիւն)
2. ԿՐԾՆԱՒՐԱԿԱՆ ԿԱՐԳԵՐՆ — Ն. Մ. Վ. ԱՏԷԷԱՆ:
3. ԹՎ. ԱՐԴԵՕՔ ԲՆԱԿԵԼԻ՞ ԻՅՆԵ ԱՍՏԵՂՔ — Յ. Է. Վ. ԲԵՐԷԱՆ:
4. ԿՐԾՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ
5. ՈՒՂԵՒՈՐ ԱՂԱՒՆԻՆԵՐ — Յ. Վ. Բ.
6. ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ (Շարայարութիւն) — Թ. ԹԵՂԷԱՆ

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի . ԹԻՒ 13 45 Հոկտեմ. 1891

Կ Ա Ր Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Ե Ի

Ա Ր Ա Ր Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն Ք

Ժ Ա Մ Ա Տ Ե Ղ Ե Ա Յ



(Շարայարութիւն) (*)

ԵՐԵՎԱՆԻ ԱՂՈԹԻՑ ԺԱՄԱՏԵՂԵԱՅ ԽՐԱՏՔ

Յառաջ լուցանէ փակակալն զկանթեզան, եւ խնկարկէ եւ սպա հարկանէ զզանկական: Եւ յորժամ ժողովին 'ի զուռն Եկեղեցւոյն, զայ փակակալն կամ սարկաւաղն յատեանն, եւ երկոս երկիրպագանէ եւ ասէ: Օրհնէա տեր, կամ հայրապետ կամ վարդապետ, եւ որ յաշակերտի դասն է ասէ, Ես առ Աստուած կարդացի: Եւ ոմանք զայս աւագ երկցու դասուն տան: Զխոնարհեցոյն Աւագ երկցու դասն սկսանի, եւ զփառք քեզն եւ Օրհնութիւն եւ զփառքն Աւագ երկցու դասն ասէ: Եւ եւս խաղաղութեան աշակերտի դասն ասէ: Զապրեցոյն աշակերտի դասն սկսանի եւ զլոյս

(*) Տե՛ս Պատկեր Բ. Տառն Թիւ 12

գոռարքն: Տէրունական տօնից փառն աշակերտի դասուն է: Ումանք զոյս զուարթն յատեանն ասեն: Եւ յայլ աւուրնն ճաղխանքն հասարակաց է: Հասեալքս ի ժամ երեկոյի Գարողն եւ աղջնն աշակերտի դասուն է: Մեհեղի եւ ողիւ եղեցն աշակերտի դասուն է, ճաղխանքն հասարակաց է: Թէ է յայն ասես յատեանն ասա, զառաջին տունն, Գարողն աշակերտի դասուն է, ճաղխանքն հասարակաց է: Աղջնն Աւագ երիցուն է: Օրհնութիւն եւ փառքն եւ համբարձիւն Աւագ երիցու դասուն է: Համբարձին թէ երեք տուն է, զերկու տունն սաղմոսն երկու երկու ասա, թէ չորս տուն է, զառաջին տունն երկու անգամ ասա, զմիջի երկու տունն մէկ մէկ ասա, եւ յետին տանն փառք ասա. թէ վեց տուն լինի, զչորս տունն մէկ մէկ ասա, եւ յետի երկու տանն փառք ասա, զմիջն մի դասն եւ զմիւսն միւս դասն: Չինի համբարձոյն Գարող եւ աղջնն Ապրեցոյնն՝ աշակերտի դասուն է: Եւ սաղմոսի սկսանելն Աւագ երիցու դասուն է, Գարողն եւ աղջնն աշակերտի դասուն է:

Իսկ 'ի կիրակամուտան զԱստ օրհնեցեքն աշակերտի դասն սկսանի. խնդրեսցուք կեցո տէրն Աւագ երիցու դասուն է: Եւ տէր ողորմեայն եւ աղջնն աշակերտի դասուն է: Իսկ թէ շաքաթու օր Եկեղեցւոյ տօն լինի, եւ Ֆեհրի ասա օրհնեցեք ասի, երկուունն զինի Հայր զբաժին դաստ օրհնեցեք սաղմոսն մի ասեր, այլ խնդրեսցուք եւ քաղաքոյ խաղաղութեան: Իսկ 'ի կիրակամտի երկուունն եւ 'ի կիւրակէ առաւօտին ի Սուրբ Աստուածն միւս քան յատեան ելանեն եւ ասեն: Չինի Հայր մեր:

ԶՏէր Աստուած փրկութեանն նա սկսանի որ զոյս կեանցն ասաց, իսկ ի կարգայ իմումի սկսանելն Աւագ երիցու դասուն է: Տէր լոյս իմ սաղմոսի սկսանելն Աւագ երիցու դասուն է: Գարողն եւ աղջնն աշակերտի դասուն է: Զամբիժան սկսանի աշակերտի դասն, որ զՏէր բարեբարն ասաց. Գարողն եւ աղջնն աշակերտի դասուն է: Հայր մեր եւ Օրհնեայն Աւագ երիցու դասուն է:

Իսկ աղուհացիցն ճաշուն, յորժամ զՀայր զբաժն ասես, զՏէր Ամենակալն նա սկսանի, որ զՀայր Դիթածն ասաց: Նոյնպէս ճաղխանք եւ Գարողն եւ աղջնն Աւագ երիցու դասուն է:

Իսկ այլ արարողութիւնք երեկոյի ժամուն ըստ հարցն թե զենեաց:

Նախ ասէ աշակերտի դասուն պատուաւորն, օրհնեցից զՏէր յամենայն ժամ. զՖեհրի 'ի լրման ասեն միաբան: Եւ զինի եւ եւս խաղաղութեան, որ սկսաւ նա ասէ օրհնութիւն եւ փառք: Եւ

աւագ երիցու դասն սկսանի Ի նեղութեանն, եւ երբ վճարի Էաննն, որ սկսաւ զվաննն նա սոէ զքարոյն վասն գտանելոյ. եւ զօրհնութիւն եւ փառքն յիւր դասն տայ: Այսպէս որ զԷաննն սկսաւ, սկսանի զսողմնն Աստուած մեր ապաւեն եւ Աստուած յօգնել ինն նայեացն, եւ զինի միաբան ասեն վասն սրբութեան Աստուածածնին, որ զսաղմոսի փոխան սկսաւ սոէ զԳրողն: զՍուրբ զԱստուածածնին եւ զսողմնն յիւր դասն տայ: Աշակերտի դասն սկսանի զԵրանեայ եւ ամբիծքն, եւ լրապէս ասեն զերեք Գրողն, եւ զինի Հոգեոցն հանգուցելոցն միաբան ասեն. որ զամբիծքն սկսաւ, սոէ զԳրողն եւ եւս խաղաղութեան, վասն հոգեոցն հանգուցելոցն, եւ զսողմնն յիւր դասն տայ: Ոչ որ զԲրիտոս որդին ասաց, նա սկսանի եւ սո. Աստուած կարդացի, Խոնարհեցո Աւագ երիցու դասուն է, իսկ զԱպրեցուն աշակերտի դասն սկսանի: Հասեալքս ի ժամ երեկոյի քարոյն եւ աղօթն աշակերտի դասուն է. եւ այն ամենայն ասացաւ յառաջագոյն:

Իսկ յաւագ ուրբաթու զիշերն կցորդ սաղմոսին Աւագ երիցու դասուն է: Իշխանք ժողովեցան ի միասին նոյնպէս եւ զսողմնն Այսօր անճառն, առաջին Աւետարանն Աւագ երիցու դասուն է, իսկ ճաշու առաջին սողմնն եւ առաջին զիրքն աշակերտի դասուն է: Աւետարանն Աւագ երիցու դասուն է. եւ որ դասն որ զԱւետարանն ընթեռնու, զհետագայ զիրքն այն դասն ընթեռնու: Եւ զինի զրեանցն զԱւետարանն միւս դասն ընթեռնու, եւ զհետագայ զրեանն որ յետի Աւետարանն յԱւագ երիցու դասն դայ:

Իսկ յորժամ Յայնուութիւն յառաջաւորն մտանէ, ՚ի ճաշու ժամն մինչ զսողմնայն եւ զսողմնն եւ զաղօթն ասես, ՚ի վճարել սաղմոսերգութեանն ասա եւ զճամբոսս եւ զճաշու շարականն եւ զսուրբ Աստուածն եւ զվասն խաղաղութեանն եւ զօրհնութիւն եւ զփառքն: Աստ ասա զՏէր Աստուած փրկութեանն եւ զի կարդայն եւ զՇնորհեա մեզ տէրն եւ զայլն: Եւ յորժամ ասես զտէր յոյս իմն, զաւուր զիրքն եւ զԱւետարանն ընթերցիր: Իսկ հաւատաւն եւ այն նոյնոյ կարգի է:

Իսկ յորժամ Տէրն ընդ առաջ յաղուհացն մտանէ, յորժամ Գաղտն զսողմնայն, զսողմնն եւ զսողմնն ասեն, զինի ասելոյ զսաղմոսերգութիւնս. զտէր Աստուած փրկութեան ասա, եւ զՇնորհեա մեզ տէրն եւ զայլն: Եւ յորժամ ասես զտէր յոյսն, զաւուր Գրողն ընթերցիր, եւ զինի զրեանցն Գրող Աղաչեսցուք. Շնորհատու բարեացն:

Իսկ թէ զերեք ողորմեայս ի միում ժամանակի ոչ ատես, այլ յերկս ժամանակս ընդ անապատաւոր սուրբ Հարցն, որ 'ի Մաքիսեանս եւ ի Թեղեհեանս էին, այսինքն յերրորդ ժամն, 'ի վեցերորդ ժամն, 'ի յիններորդ ժամն, այսպէս է արարողութիւնն:

'Ի յերրորդ ժամն միանգամ հարկանեն զզանկակն եւ ժողովին 'ի դուռն Եկեղեցւոյն, եւ ասեն զողորմեայն, շարական օրհնեմք զքեզ զկնի սաղմոնն որ կանոն որ լինի. Գարոջ միաբան ամենեքեան եւ իւր սաղմոնն. սաղմոն տեր Աստուած օրհնեայ: Աստուած մեր կենարար. շարական խաչի, եւ Հոգւոյ զաշտեան յոր ձայնի որ լինիս: Գարոջ խնդրեսցուք. սաղմոն Առաջնորդեա, եւ ըստ կարգի սաղմոն, Գարոջ եւ սաղմոն:

Վեցերորդ ժամն հարկանեն զզանկակն կրկին անգամ, եւ ժողովին 'ի դուռն Եկեղեցւոյն, եւ ասեն ողորմեայն, շարական Խաարեցաւ, սաղմոն, Կեցո, Գարոջն ի լրման, Գարոջ Արքուն մտօր եւ իւր աղօթիս: Երկրորդ Սաղմոն տեր մի սրտմտութեամբ, Ողորմեա ինձ տեր, զի հիւանդ եմ ես, այլ սաղմոն Ես ասացի 'ի վերանայ յինեն, շարական Յոյս եւ յարութիւն ազգի մարդկան եւ ապաշխարութեան հայր բագումողորմ, յոր ձայն որ լինիս, անտի ասա: Գարոջ Վասն հիւանդաց, սաղմոն Փարատեա եւ այլն ըստ կարգի:

Իններորդ ժամն հարկանեն զզանկակն երկուս անգամ, եւ ժողովին 'ի դուռն Եկեղեցւոյն, եւ ասեն զողորմեայն. շարական Զարգարակցեայ, սաղմոն Օրհնեցից գտեր յամենայն ժամ, եւ շարական Աստուածածնի, եւ սաղմոն Աստուած մեր ապաւեն եւ Աստուած յօգնել ինձ նայեաց: Գարոջ զՍուրբ գԱստուածածին, սաղմոն Բնկայ տեր. եւ զամբիծան 'ի լրման ասեն, Գարոջ Աղաջեսցուք զկենսատու, սաղմոն Անկեայ առաջի քո, սաղմոն Սիրեցի, եւ զկնի շարական խաչի, եւ հանգստեան, յոր ձայն որ լինիս, Գարոջ վասն հոգւոց, սաղմոն Գրիստոս որդի:

Մտասաներորդ ժամուն ասեն, Ես առ Աստուած կարգացի, եւ ըստ կարգի:

Կատարումն յամենայնի Աստուած օրհնեայ եղիցի յաւիտեանս յաւիտենից, ամեն:

(Շարայարելի)

ԿՐՕՆԱԻՈՐԱԿԱՆ ԿՍՐԳԵՐՆ

ԵՒ ԱԶՍՏԱԽՈՂԻ ՄԻ ՆՈՅՍ ՎՐԱՅ ԸՐԱԾ ԴԱՏԱՍՏԱՆՆ

Revue des Deux mondes Հանդիսին մեջ Պ. Թեյն երկասիրութիւն մի կը հրատարակէ ի վերայ «Վերակազմութեան Գաղղիոյ յամի 1800.» յորում առիթ ունեցած է նաեւ Կրօնաւորական կարգաց վրայ խօսելու, եւ գայն՝ պատմական ճշմարտութեան դուրս այլ կրօնք չդաւանող մի մարդոյ անկեղծութեամբ կ'ընէ։ Որոյ հետեւութիւնն սա է գի, այդ էջերուն շատերն, զորս այս ազատախոհն գրած է, եւ որ այդօրինակ մի մեծ հանձնարով օժտեալ, բայց դժբաղդաբար մեր կրօնքին եւ ամեն կրօնական հասարակ այնքան հետի է, կարի քաջ պիտի պատշաճէին Քրիստոնէութեան մի շատագովութեան մեջ։ Ամեն որ, հետեւեալ քաղոսածները կարդալով, կրնայ դատել։

«Կարմեղեանք, Կլարիստեանք, Դատերք Սրտին Յիսուսի, Հայցողք, Սյցելականք, Փրանկիսիկեանք, Բենեդիկտեանք եւ այլ նմանք, շուրջ Չորս հազար Կուսանք հայեցողական կեանք կը վարեն։

«Շարիքեանք, Կիստերոսեանք, Թրաքեանք եւ այլ մի քանի նմանք, շուրջ Հազար Ութ Հարիւր Կրօնաւորք, որք ըստ մեծի մասին երկիրը կը գործեն, այս աշխատութիւնը միայն իբրեւ երկրորդական կրթութիւն մի ստանձնած են։ Իւրեանց գլխաւոր եւ առաջին նպատակն է աղօթքն, մտածութիւնն եւ Աստուածպաշտութիւնն։ Սոքա եւս իւրեանց կեանքը ոչ թէ այս աշխարհիս ծառայութեան, այլ հանդերձելոյն մտածութեան նուիրած են եւ կը գործածեն։

«Աստուծէ դուրս միւս ամենքն, Քան և Ուրի Հաղարէ առաւել արեւ, և Հարիւր Քան և Երեւ Հաղարէ առաւել կանայք, նոյն իսկ իւրեանց հաստատութեան կանոնով բարեբարք են եւ կամաւորաց խմբեր կազմելու սահմանեալ, եւ որք իւրեանց իսկ կամօք եւ ընտրութեամբ վտանգաւոր, զգուելի եւ կամ առ նուազն ասիրալիս ծառայութիւններ ստանձնած են, որպիսիք են վայրենի եւ բարբարոս ժողովրդոց մէջ առաքելութիւնք, հիւանդաց, սպուշներու, ինչպագրններու, ախտաժեռներու, անբուժելիներու դարմանքն, աղքատ ծերոց կամ լքեալ տղայոց խնամքն, եւ այլ անթիւ բարեօրրական գործեր, որպիսիք են, ի մէջ այլոց, խնամակալութիւն, կրթութիւն, նախնական դաստիարակութիւն, որբանոցաց, անկեղանոցաց, արուեստանոցաց, ասպատանարանաց եւ

բանտից մէջ ծառայութիւնս, եւ ասոնց ամենքն եւս ճրիարար եւ կամ ամենատարին վարձով, քանզի իւրաքանչիւր կրօնաւորի եւ կրօնաւորուհւոյ նիւթական սխտոյքն եւ անձնական ծախքն կարի սեղմեալ են:

«Գոն բաղում Հատարակութիւնք արանց եւ կանանց, յորս իւրաքանչիւր անդամոյ տարեկան ծախքն 300 ֆրանքի զուամարը չանցնիր: Տըլիէլ գտնուող Թրարեանց վանքին նկատմամբ այս զուամարն կարի շատ է:—Եթէ կրօնաւորական Գործնական Հաստատութեանց 160,000 Կրօնաւորաց եւ Կրօնաւորուհեաց մատուցած օգտակար ծառայութեան արժէքն, մարդու զուլս 1000 ֆրանք դնանաւորի, տարեկան 160 միլիոն ֆրանք կը լինի: Եթէ իւրաքանչիւր Կրօնաւորի կամ Կրօնաւորուհւոյ ծախսոց համար տարեկան 500 ֆրանքի զուամար մի յատկացուի, միանամուռ տարեկան 80 միլիոն ֆրանք կը լինի: Եւ հետեւաբար ժողովուրդն տարին 80 միլիոն ֆրանքի զուտ շահ մի ունի:

«Ֆացայացտ է թէ, այս արանց եւ կանանց համար շարժիչ պատճառաց հատարակ հաւատարակչութիւնն պիտիպայր դարձած է: Իւրեանց ներքին կշիռն վրայ այլեւս իւր անձին սէրն չէ՝ որ այլոց սիրոյն կը յաղթէ, այլ այլոց սէրն է՝ որ իւր անձին սիրոյն կը յաղթէ:

«Միտենք այս հաստատութեանց մին ճիշդ այն վայրկեանին, յորում կը ձեւանայ, եւ սխտի տեսնենք թէ ինչպէս ծանրակըչութիւնն, անձնասիրական դժացումէն, ընկերսիրական դժացման կ'անցնի: Գրեթէ միշտ ի սկզբան անդ գործոյն, նախ սարդ կարեկցութիւն մի կ'արտայայտի, ապա, ի տեսիլ թշուառութեան եւ մղրութեան, քանի մի բարի սրտեր ի գութ կը շարժին, զի հողիներ եւ մարմիններ ի վտանդի են, վերահաս է նաւաբեկութիւնն: Եւ անա՛ երեք կամ չորս աղատարարք կը ներկայանան:

«Ի Ռուէն, 1818 թուականին, ալքատ օրիորդ մի խորհրդով իւր փողովրդապետին, իւր բնակարանն եղող խեղճ վերնայարկին մէջ մի քանի բարեսէր անձեր կը միաբանէ, որք ցերեկներն հոն դաս կուտան, իսկ գիշերներն իւրեանց հացը հայթայթելու կ'աշխատին: Այսօր սոքա 800 հոգի են, եւ Քորք Մուրք Մրտին Յիսուսի անունը կը կրեն: Ի Լալալ՝ զգլջացեալ ախտաժետ կանանց Ապաստանարանին հիմնադիրն կտաւ արգիտը պարզ կին մի է, որ նախ զթատիրաբար երկու աղջիկ ասպնջականելով իւր Ապաստանարանին սկիզբն տուաւ, սոքա այլ զգլջացեալներ բերին անոյր, եւ այժմ գրեթէ հարիւրի չափ այգսխտի հաստատութիւններ գոն անդ:

«Շատ անգամ այսպիսի բարեփոխական հաստատութեանց հիմնադիրն՝ տեղւոյն ժողովրդապետն եւ կամ հողաբարձու Քահանայնէ, որ տեղական մի թշուառութենէ շարժեալ, կը կարծէ ի սկզբան թէ՛ իւր ըրածն լոկ տեղական գործ մի է: Այսպէս ի Ռուխ-Սիւր Լուառ սկսաւ, 1806 թուականին, Նախախնամութեան Միաբանութիւնն, որ այժմ 918 Քոյրեր եւ 193 Տուն ունի: Ի Վալլա 1817ին սկսաւ Մարիամու Փոքր-Նղբարք ընկերութիւնն, որ այժմ 3,600 Նղբայրներ ունի: Ի Սեն-Սէրվան սկսաւ 1940 ին աղքատաց Փոքր-Քոյրք հաստատութիւնն, որք այժմ 2,685 հոգի են, եւ առանց ս' եւ է օգնութեան, ողորմութեամբ միայն՝ իւրեանց 158 տանց մէջ կը կերակրեն եւ կը խնամին 20,000 ծերեր, որոց 15 հազարը իւրեանց 93 տանց մէջ ի Գաղղիա: Այս Քոյրերն՝ իւրեանց ասանջականեալներէն յետոյ՝ նոցա աւելորդը կ'ուտեն. արգելեալ է որ եւ է հասոյթ կամ կալուած ընդունիլ, զի զօրութեամբ իւրեանց կանոնին են՝ եւ կը մնան մաւրացողք՝ նախ, եւ ի վեր քան զամենայն իւրեանց ծերոց, ապա եւ իբր երկրորդաբար իւրեանց համար: Գրտեղու արժանի են այս ձեռնարկութեան սլարադայք եւ հիմնադրուհեաց հանգամանքն. սոքա տասն եւ վեցէն մինչեւ տասն եւ ութ տարեկան երկու զիւզացի գործաւոր աղջիկներ էին, որոց համար ժողովրդապետութեան հողաբարձու Քահանայն «Փոքրիկ կանոն մի» յօրինած էր: Այդ երկու օրիորդք կ'ւրապէ օրերն ի միասին ծովեղբրքի մօտ քարայրի մի մէջ կը սերտէին եւ կը խորհրդածէին այդ փոքրիկ մատենիկը, յետոյ անոր մէջ սլատուիրեալ ջերմեռանդութիւնները կը կատարէին, այս ինչ ջերմեռանդութիւն այս ինչ ժամուն, վարդարան, աղօթք, այցելութիւն յեկեղեցին, խղճի մտաց քննութիւն, եւ այլ բարեպաշտական գործեր, որոց հանսպառօրեալ կրկնումն հողւոյն մէջ զերբնականին գաղտփարը կը տպաւորէ եւ կ'ամրապնդէ: Ահաւասիկ բնական բարեպաշտութեան վրայ մի այլ բնոն եւս, որ յողորմէ կամքը կը հաստատէ, եւ զժողին յանձնուրացութեան կը պահէ:

«Ի Բարիլ, Ոստիկանապետութեան երկու սրահներուն մէջ, ուր ձերբակալեալ աղջիկներն եւ գող կանայք առժամանակեալ կերպով մի կամ երկու օր կը մնան, Մարիամու եւ Յովսէփայ Կուտանք, որք իւրեանց ուխտիւն ալս մարդկային աղմի մշտահոտ աղբանոցին մէջ ապրելու գատապարտեալ են, երբեմն իւրեանց սրտին նուաղիլը կը զբան, բարեբաղդաբար յանկեան ուրեք նոցա համար յարգարեալ փոքր մատուռ մի կայ, անպր աղօթելու

կերթան, եւ մի քառորդ ժամէ յետոյ՝ քաջաորտութեան եւ քաղցրութեան պաշարով զօրացեալ կը դառնան:

«Մեծ իրաւամբ եւ երկար փորձառութեան տուած իշխանութեամբ Հայր Ստեփաննոս Հաղարիսթներու եւ Պաւլեան Սուրբ վինչնոցիտի Գոտերաց Մեծաւորն կ'ըսէր իրեն այցելութեան օտարականաց.» Եւ մեր կենցաղալարութեան ժանրամանու-թիւնները ձեռ ծանուցիլ, բայց նորա դաղտնիքը հտուի: Ահաւասիկ այդ դաղտնիքն, որ է, «Յիսուս Քրիստոս ծանուցեալ սիրեցեալ եւ երկրպագեալ յԱմենասուրբ Հաղորդութեան»:

Եւ անաստիկ այդօրինակ գործունեայ եւ այդչափ արդիւնաւոր այս կրօնաւորական կարգերն են, զորս հակակոչե-րականութիւնն անբան ատելութեամբ մի կը հալածէ, եւ ամեն օր նոցա դէմ հայածանաց նորանոր օրէնքներ կը հնարէ: Հնար չպիտի լինէր մեկնել մտաց այդպիսի մոլորութիւն մի եթէ զգիտցուէր թէ որչափ ծայրայեղ եւ բռնն է հակակրօնական եւ հակակարողիկեայ մոլեգնութիւնն: Այս մոլեգնութիւն, երբ կը սկսի գործել, կարծես ստուգիւ «դիւսկան» բան մի ունի, Տը-Մեսքրի խօսքին համեմատ, զոր ինքն ՉՅի յեղաշրջութեան կը պատշաճեցնէր: Ամենամեծ եւ ամենանշահասէր դիւստգնութիւնն, փոխանակ գեղընկեց ընելու, առասել եւս կը գայրացունէ գայն: Այսպէս միայն կրնան մեկնուիլ այն գգուելի հայածմունք, որոց ենթարկեալ են այն կրօնաւորական կարգք, յորս կարի հագուագիւտ եւ դիւստգնական առաքիլութիւնը ամենաբարձր աստիճանաւ ի գործ կը դրուին՝ այնպէս, որպէս թէ ամենապարզ, սովորական եւ անտարբէր բաներ լինէին, եւ որք աղքատաց եւ բշտատաց համար բարեբարութեան եւ օրհնութեան առատագեղ եւ մշտանոս աղբիւրներ են:

Ն. Մ. Վ. ԱՃԷՄԵՆՆ



ՔԷ ԱՐԴԵՅՕՔ ԲՆԱԿԵԼԻ ԻՅՅԵՆ ԱՍՏԵՆՂՔ

Հանրէս ամառեայ խողովրդական աստեղաբաշխութեան անուն լրա-
վրին վերջին տեսրին մէջ՝ աստեղաց քնակելութեանը վրայ գեր-
մաներէնէ թարգմանեալ սա հատածը կը կարդանք:

«Թէ ինչպէս արդեօք կեանքն յառաջ եկա՞ է երկրիս վրայ...»

«Այս բանս երեք այլ եւ այլ եղանակաւ կրնայ յառաջ եկած
«ըլլալ. 1. կամ արարչական զօրութեամբ մը, եւ, յայտ գրութեան,
«մեզ չէ փոխ վրանալ թէ այս արարչութիւնն՝ Աստուծոյ
«չունչի ուսուցածն՝ պէս, միահաղոյն կատարուած է եւ կամ թէ
«կեանքի ստորնաղոյն ձեւերն եւեթ ստեղծուած են. 2. կամ ինք-
«նեակ այսինքն ինքնարեւական ծննդեամբ (génération spontanée)
«3. կամ վերջապէս միջավայրի մթերքներով (apport) զոր, ինչ-
«պէս լի նիւթով կ'երեւակայեմք, նոյնպէս կրնամք կենաց սեր-
«մերով լեցուն ենթադրել»:

Այս սակաւատող հատածի ընթերցմամբ միայն ակն յանդիման
կ'երեւին շատ մը մտորութիւնք եւ սխալանք, այսու հանդերձ
զանոնք առաւել եւս մասնամիջ ընել եւ անոնց հիման որչափ
խախտու ըլլալը ցուցնել օգտադուրկ չթուիր մեզ:

Ս.

Արեղակնային ճշմարիտ գրութեան գտնուելէն եւ զիսնոց
զատէն ընդունուելէն ի վեր, աստեղաց բնակութեան, կամ այս-
պէս ըսելու համար, քնակելութեան խնդիրն, միշտ զբաղած է
առաւել կամ նուազ սաստիկ երեւակայութեան տէր եւ ի սէր
անձանօթի հետամուտ անձանց միտքերը: Իսկ, ի մեր աւուրս,
նիւթակրօն դպրոցի գիտունք, որք զլիսուորաբար աստեղաբաշ-
խութեան ճիւղը մշակեցին, կարծեցին թէ այս ենթադրական խնդ-
րոյն մէջ զատած ըլլան մի այնպիսի ռազմամթեր որով հնար է
նոցա մարտնչել ոչ միայն յայտնեալ այլ սոսկ բանական ճշմար-
տութեան զէմ, Աստուծոյ, մարդկային հողոց եւ բնազանցու-
թեան վերաբերեալ ամեն խնդրոց հակառակ:

Սակայն վերոյիշեալ հատածի հեղինակն՝ որ Բօսթումի վի-
տանոցին աստղաբաշխն է, ուղղակի անոնց շուղին չհետեւիր,
այլ կը ներկայանայ մեզ իբրեւ անտարբեր սկեարտիկեան ոք, որ
այս երէ՛ գրութեանը մին կամ զմիւսն հաւատարապէս ընդու-

նեղու տրամադիր ըլլայ: Ահաւասիկ իւր բուն խօսքերն, «ըստ «խմտտասիրական տեսակէտի՝ այս երեք զրութիւններ հաւա- «սարտպէս հիմնեալ են, զի մին առաւել քան զմիւսնս զիւրըմբո- «նելի չէ, եւ ոչ ալ ի նպաստ միոյն գննութիւնք կան ի միջի:»

Ուրեմն գննենք նախ սա երեւելի ասացուածը թէ «ըստ ի- մաստասիրական տեսակէտի այս երեք *բո-թիւններ* հաւասարա- պէս հիմնեալ են», եւ զիսել տանք, 1. թէ, այս կարծեցեալ *բո- ղո-թիւններ* առաջինը՝ ոչ թէ միայն զրութիւն չէ, այլ ասպարեց- եալ իրողութիւն մի է, իրողութիւն՝ զոր ամեն ժամանակի ի- մաստասիր կը ջանան միտադնել տկար, նախադաշարեալ կամ մոլ- եալ մտաց առջեւ, եւ զոր սակայն չէ հնար ուրանալ կամ անել յերկրայս լուրջ եւ անկեղծ քննութեամբ: 2. թէ՛ երկրորդ զը- րութիւնն կամ արարչագործութեան մը արդիւնքն է՝ որով հաս- տատած կ'ըլլամք գերադոյն եւ ամենակատարեալ էակի մը զայն տեսզծած լինելը, եւ կամ այս զրութիւնն իմաստազուրկ եւ ան- տեղի բան մի է, եւ հետեւաբար զրութեան անունն անպամ պէտք չէ որ տրուի: 3. թէ՛ կենաց սերմերով լեցուն միջավայրի միջերք ենթադրելն՝ չկրնար ըստ գիտութեան պաշտպանուիլ եւ զայն շնորհեալ հանդերձ, ոչ ինչ կրնայ մեկնուիլ ու բացատրուիլ. վասն զի պէտք է նաեւ զխոնալ թէ ի միջավայրի բնալիր եւ առա- տապէս տիոեալ կենաց սերմանք սլատից յառաջ կուզան ո՞վ զանոնք հոն զրած է, ինչպէս յօրինուած են: Եւ անա այսպէս կամ ըստ հիւթակրօնից ինքնեակ այսինքն առանց պատճառի ծը- նընդեան անտեղի զրութեանը կը յանդիմք, եւ կամ թէ՛ այնմ զոր հեղինակն կ'անուանէ *բո-թիւն* արարչագործութեան Ամենակալի:

Ուրեմն Աստուաց Բնակելիութեան հեղինակին ասուելնած ի- մաստասիրական տեսակէտը ամենեւին իմաստասիրական չկրնար նկատուիլ: Վասն զի բնակրօն զխոնոց մէջ այժմ առ հասարակ տարածուած սա մեծ սխալի վրայ հիմնեալ է, թէ ճշմարտութեան հասնելու համար գննութենէն (observation) զուրս էական միջոց մը չկայ: Արդ ստուգութեան հասնելու համար գննութիւնն օրինա- ւոր միջոց մի է անշուշտ, բայց միայն թէ իրեն յատուկ սահմա- նիւն մէջ ըլլայ, այսինքն պատահական եւ նիւթական իրաց սահ- մանիւն մէջ, որ բնական գիտութեանց մի միայն սահմանն է. իսկ տարբեր սահմանաց մէջ՝ գննութիւնն չկրնար մի եւ նոյն ոյժն ու արժէքը ունենալ, այլ միայն տոտրակարգեալ՝ եւ երբեմն իսկ ոչինչ արժէք կ'ունենայ: Այսպէս, օրինակի ազադաւ, զուտ ուսո- զութեան (mathématiques) մէջ գննութիւնն ամենեւին տեղի չու-

նի, ամեն ինչ տրամախոհութեամբ եւ հետեւողական (deductif) տրամախոհութեամբ կը կատարուի : Ըստ ինքեան բացայայտ ճշմարտութեանց ձեռքով՝ որք յոյժ սակաւաթիւ են եւ առած (axiomes) կ'անուանին, ուսողական գիտութեան ամեն ճիւղերն յաւասար կ'եղած են հետեւողութեանց օրինօք, եւ այս գիտութիւն՝ Եւկլիդեսի ժամանակէն ի վեր, տարածուելէն եւ յառաջանալէն երբեք չդադրեցաւ, եւ իւրեր աւուրս յառաջադիմութենէ ի յառաջադիմութիւն կ'ընթանայ անդադար : Արդ այս տրամախոհական գիտութիւնը՝ զննական գիտութեանց կրցան մերձեցնել, եւ այս միաւորմամբ շատ արդիւնքներ յառաջ կ'եկան : Սակայն եւ այնպէս սա ճշմարիտ է որ ուսողութեան սկզբունքն զուտ վերացեալ են, եւ անտի յառաջ կ'եղած գիտութիւն՝ էականապէս բնազանցական մի գիտութիւն է, որ քանակութիւնները կը նկատէ ըստ ինքեան եւ առանց իրիւր մերձեցուցման :

Ապա ուրեմն, ստուղութեան համակու համար զննութենէն զատ ուրիշ տարրներ կան : Մեք ուսողական հետեւողութիւնը իբրեւ օրինակ առինք, բայց տրամաբանութեան օրէնքը գիտութեան ամէն ճիւղերուն կը պատշաճին, եւ բնապաշտք յաճախ կը մոռնան զանոնք՝ մինչ չճանչնալ կը ձեւացնեն պատճառականութեան սա մեծ սկզբունքը թէ «չիք արդիւնք առանց պատճառի» կամ աւելի ճիշդ խօսելու համար «Ձիւք երեւոյր առանց պատճառի», վասն զի «բոլորն» բուն կը պարունակէ յինքեան պատճառի գաղափարը : Իսկ արդ՝ արարչագործ պատճառը իբրեւ ենթադրութիւն նկատելն՝ այս էական սկզբունքը չճանչնալ ձեւացընել է այնու պատրուակաւ զի ուղղակի նիւթական զննութեան տակ չիցնար : Նոյնպէս, ըստ նիւթապաշտ խմատի՝ ինքնեակ ծնունդը իբրեւ կարելի ընդունելն՝ յիշեալ սկզբունքը չճանչնալ ձեւացընել է : Նմանապէս՝ միջավայրի մէջ թափառող աստեղաց վրայ ըստ պատահման կեանք սխուելու համար՝ միջատտեղեան անջրպետը լեցընող տիեզերական (եւ անշուշտ յաւիտենական) համայնաբնութեան մը (panspermisme) կարելիութիւնը ընդունելն՝ այն մեծ սկզբունքը չճանչնալ ձեւացընել է : Բայց ստտի, այս վերջին երեւակայական գրութիւնն գիտական անլուծանելի առարկութեանց կը բաղխի՝ ըստ որում արեգական եւ աստեղաց առնչաբար սեղմուալ ճառագայթին ներգործութենէն զուրս բարեխառնութիւն չգտնուիր : Նոյնպէս՝ ըստ ուսողական տեսակէտի, անհուն միջավայրը լեցընող անհուն եւ անխիւ սերմեր ենթադրելն, անհուն եւ

միանգամայն որոշեալ թիւեր ենթադրելու անտեղութեան կը յանդի:

Ուրեմն պէտք է մերժել թէ՛ ինքնեակ ծննդեան դուրսը՝ որ ըստ զուտ գիտական տեսակէտի այս օրուան օրս բոլորովին դատապարտուած է, թէ՛ «կենաց սերմերով լեցուն միջավայրի մթերից» դուրսը՝ որ գիտնականապէս եւ իմաստասիրաբար չկրնար պաշտպանուիլ: Ուստի կենաց ծագման մեծ խնդիրը մեկնելու համար կը մնայ ընդունիլ «արարչագործ գորութիւն մը», այլազգ սասցեակ՝ աստուածային Ս.մենակարգութիւնը:

Ո՛հ, գիտեմ, ինչպիսի մերժմամբ ինձ հակառակիլ պիտի ճգնին ըսելով թէ «քու այս բացատրութիւնդ գէորնակա՞ն չէ»: Այս մեծ բառը արտասանելուն պէս՝ կարծես թէ ամեն ինչ լինցած է. անսխալ սրտովամ մի է այս՝ որուն չկրնար պատասխանուիլ:

Թող այնպէս ըլլայ, այդ բացատրութիւն գէորնակա՞ն չըլլայ՝ ըստ սեղմեալ, անձուկ եւ հետեւաբար անճիշդ իմաստին՝ զոր կուտան հիմայ այս բառին. բայց եւ այնպէս իմաստասիրական է: Իսկ եթէ առարկելու ըլլաք թէ իմաստասիրութեան սահմանը մանեկով՝ բուն գիտութեան սահմանէն զուրս կ'իջնեմ, կը պատասխանեմ թէ նախ անկից երնողը զուք էք, ինչու որ լոկ երեւակայական զաղափարաց մէջ կը փնտռէք առեղծուածի մը լուծումը՝ զոր գիտութիւնն-ըստ իւր անձուկ իմաստին-լուծելու պաշտօն չունի յիւրում սկզբան, այլ միայն ուսումնասիրելու յարդիւնս իւր:

Երանէ որ կարէ ճանաչել գագարճաւս իրացն

կ'ըսէ Վիրգիլիոս, եւ յիրաւի, գիտութեան գերն է երկրորդական պատճառաց կապակցութիւնը ուսումնասիրել, դնել, եւ զրեթէ զայն յանկարծակիի բերել: Բայց երբ միանգամ անոնց բոլոր շարքն ու խաւը այցելեց, այլ եւս պարտի դադարել, զի առաջին եւ տիեզերական Պատճառի ստակալի խնդիրը քննելը՝ այլ եւս ուրիշ կարգի ծանօթութիւնները՝ գիտելոյ եւ ճանաչելոյ գերադոյն ճիւղին կը վերաբերի:

Երբ՝ բուն գիտութիւնն իւր այս սահմանին մէջ ամբօրովիլ չգիտեր, երբ անպին անցնելով առջնչական, նիւթական եւ պատահական կարգին ոճերն ու եղանակները կ'ուզէ պատշաճեցուցնել բոլորովին տարբեր եւ հարկաւոր կարգի մը, այլ եւս կցիտուր ու տարտամ վիճակի մէջ կը գտնուի, եւ վերջապէս՝ երեւոյթը առանց պատճառի, նիւթը՝ յաւիտենական, ներկայ եւ որոշեալ թիւերը՝ անհուն ենթադրելու անտեղութեանը մէջ կ'իջնայ:

Դառնանք այժմ մեր դիտուն աստղաբաշխին առջի ըսածին եւ ամեն բանէ յառաջ շնորհակալ ըլլանք իրեն որ իբրեւ «անժխտելի ստուգութիւն» կ'ընդունի թէ էր երբեմն յորժամ երկիրս անբնակ էր, եւ թէ կեանքն ի հարկէ սկզբնաւորութիւն մ'ուսնեցած է: Այս բանս՝ կ'ըսէ հեղինակն, «երեք այլ եւ այլ եղանակաւ կրնայ յառաջ եկած ըլլալ, կամ արարչագործութեամբ մը, «եւ, յայսմ դիպուածի, մեզ չէ փոյթ գիտնալ թէ այս արարչութիւնն՝ Ստուածաշնչի ուսուցածին պէս՝ միահազոյն կատարուած է, եւ կամ թէ կենաց ստորնազոյն ձեւերը եւեթ ստեղծելով շատացած է . . . »:

Այս հատուածէն լռելեայն կը հետեւի որ Ս. Գիրքն, ըստ մեր հեղինակին, կ'ուսուցանէ թէ Ստուած՝ արարչագործութեան անթիւ անհամար մանրամասնութեանցը ուղղակի եւ մասնաւորապէս միջամտութիւն ունեցեր է, եւ թէ մեք Ստուածաշունչի հետ հակասութեան մէջ եմք, երբ կ'ընդունիմք կենաց լոկ ըստորնաբոյն ձեւերուն ստեղծումը, որք ի շարս ժամանակաց անեցած եւ դարգացած են ըստ մի կամ բազում օրինաց՝ զորս գիտութիւնն լուծելու պաշտօնն ունի: Մակայն այս երկուքն ալ մեր հեղինակին համար անտարբեր է, վասն զի նա թէ՛ ինքնեակ ծննդոց, թէ՛ միջատեղեան համայնասերմութեան կարծեցեալ գրութիւնները իբրեւ «հաւասարապէս հիմնեալ» կ'ընդունի: Այսու ամենայնիւ մեք օգտակար կը գատիմք այս կէտիս վրայ ծանրանալ, եւ այսու առթիւ, միանդամ եւս ցուցնել թէ Սուրբ Գրոց վարդապետութիւնք՝ մեր հակառակորդաց կարծածէն շատ աւելի ընդարձակ են, եւ անոնց մեկնութիւնքը շատ աւելի լայն են քան զոր չեն ըմբռնիր նոքա՝ որք առանց դայն ճանչնալու՝ անկից վկայութիւն կը բերեն:

Եւ այս մեր ձեռնարկութիւնը աւելի ձեռնհաս հեղինակութեամբ հաստատելու համար՝ Տիւրիէ տը Սէն-Բրոսէ անուն հոչակաւոր կանոնիկոսին հետ՝ Արարչագործութեան մէջ երկու կարգ կը զանազանեմք, 1. աշխարհիս սկիզբը, եւ 2. անոր կազմուելը (formation): Տիեզերաց սկզբանը եւ անդ կենաց ծագմանը վրայ գիտութիւնն բան մը չլիտեր, եւ մեզի բան մը չտորվեցներ, եւ Ս. Գիրքն, ինչպէս նաեւ բանականութիւնն մէկ բան միայն մեզ կ'ուսուցանէ, այսինքն թէ՛ Ստուած իւր ազատ կամօքն եւ ամենակարողութեամբը՝ գտիեզերս՝ իւր բոլոր մէջի բաներովը՝ ոյ-

չընչէ հաննց, այս է ստեղծեց՝ բառին յատուկ առամարը: Բայց սոյն ստեղծագործութեան է՝ նշան էր զամ ըլլալուն, եւ տխրեցաւ ինչ կերպով յերկնստեան կամ հաւատարման վրայ «հաւատքը ինչ կ'ուսուցանէ:—Ոչինչ»:

«Արարչութեան վարդապետութիւնը միանգամ ընդունելէն յետոյ, երկրորդական պատճառաց ունեցած ազդեցութիւնը խուճապակից եւ մեկնելը, եւ ի ձեռն զննութեան՝ եղելոց եւ նոցին «անընդմիջական ստրկութեան» դիտական օրէնքներ հաստատելը «իւրաքանչիւր ումեք թող տուեալ է: Աշխարհո՛ւ իւր վիտելութեան «առաջին վայրկեանէն, մարդուս ազատ վիճարանութեան, եռանդուն եւ ազնիւ հետազոտութեան յանձնուած է»)

Այս խորհրդածութիւն կը պատշաճի անշուշտ համօրէն տխրեցաւ, եւ կը պարունակէ յինքեան թէ հանքային թաղաւորութիւնը թէ՛ գործարանաւոր աշխարհը: Բայց միմիայն այս վերջնոյն պատշաճուելով հանդերձ, իւր զօրութիւնէն բան մ'ալ չկրօնցնէր: Գործարանաւոր կեանքն՝ Բարձրելոյն արարչական կամքէն իւր առաջին սկիզբն ունի, ահա ինչ որ Ստուածաշունչի վարդապետութեան կը հետեւի: Սակայն Տիւրքի Կանոնիկոսին հետ կը հարցունեմք թէ «հաւատքն՝ գործարանաւոր թաղաւորութեան «(règne organique) զարգացման նկատմամբ, եւ հողազնախա վրայ «կենաց հետ զհետէ յերեւան գալուն համար՝ ինչ կը սրտաւիրէ «մեղ:—Ոչինչ»)

Հետեւաբար, մինչ կ'ընդունիմք թէ կենդանական սկզբունքը, կենաց սերմանքը, անգործարանաւոր բնութեան ծոցը զետեղուած են արարչական Զօրութեան մէկ հրամանաւոր, փոյթ չէ այլ եւս վասն հաւատոց՝ թէ սոյն Զօրութիւնն՝ բուսական ու կենդանական կենաց իւրաքանչիւր անթիւ անհամար մանրամասնութեանցը միջամտած ըլլայ, կամ թէ, «կենաց ստորնադոյն կերպարաններ ստեղծելով շատացած ըլլաք», ըստ որում գործարանաւոր կենաց այլ եւ այլ ձեւերն աստիճանաբար եւ հետ զհետէ յառաջ սկիտի գային ըստ օրինաց բարեշրջութեան (évolution): Վասն զի, «Ս. Գրոց մէջ բառ մը չկայ որ բարեշրջութեան մը «կենթադրութեան հակառակ ըլլայ, եւ բուսային ու կենդանային «թաղաւորութեանց ինչ եղանակաւ յառաջ գալուն ու զարգանալուն նկատմամբ յայտնեալ բան մը չուն' մը»:

Ստոր ապացոյց կրնանք յառաջ բերել թէ Մ'ննոցո՞ ըստ բառերուն սուրբ Հարք եւ վարդապետք մէկմէկէ տարբեր չորս տեսակ մեկնութիւն տուած են, որոց մին բոլորովին կը հակառակի

բարեչըջութեան, երկրորդն չի հակառակիր եթէ գործարանաւոր
կաղապար նախնային ստեղծումը ենթադրուի, երրորդը ոչ նպաս-
տաւոր եւ ոչ աննպաստ բարեչըջութեան, իսկ չորրորդը բոլորո-
վին նպաստաւոր է եւ Յիկեղեցին այս ենթադրութեանց նկատմամբ
վճիռ մը չէ արձակած:

Ոյր վասն, «Աստեղաց ընակելիտ թեան» հեղինակին կրնամք
չնորհել թէ «արարչագործ զօրութիւնն» որ գործարանաւոր կեան-
քը բխեցոյց, «կենաց ստորնադոյն կերպարանները ստեղծելով»
կրցաւ շատանալ, եթէ այս գրութիւն իւր ենթադրութեան աւե-
լի նպաստաւոր կ'երեւի, քան զայն որ իրական տեսակներու
թուոյն համեմատ ստեղագործութիւն կ'ընդունին: Նա կը յայտարարէ
սակայն թէ իւր փայթը չէ, իրեն համար կարեւորութիւն մը չու-
նի: Բայց ինչ որ իրեն համար աւելի կարեւոր ըլլալ կը թուի,
այս է «առաջին գրութիւնը» այսինքն՝ եղեղոյ առաջին եւ
արարչական պատճառը ըստ կարելոյն հետացունել:

«Վասն զի, եթէ արարիչ զօրութիւն մը ընդունելու ըլլայ,
«կ'ըսէ մեր հեղինակ, այդ զօրութիւնն գերազոյն եւ անթախան-
«ցելի էակի մը արտայայտութիւնը լինելով, ընական օրինաց ներ-
«քեւ չգտնուիր»:—Շատ ճիշդ է այս—«Յայնժամ մեր, կը յաւե-
«լու դերմանայի աստղաբաշխը, Աստուածային կամաց ինչ եղա-
«նակաւ գործած լինելուն վրայ տրամաբանելու եւ ոչ միջոց մը
«կ'ունենամք, չեմք գիտեր թէ արարիչ զօրութիւնն մի անգամ
«եւ եթ գործածե՞ր է զիւր կարողութիւն ի նպատտ երկրի. կամ
«թէ այլ եւ՝ այլ ժամանակ զայն կը գործածէ, կամ թէ հաստա-
«տուն եղանակաւ ի գործածութեան է այն, մինչ երկնային մար-
«ւին մը կենդանի էակաց ընակութեանը յարմարութիւն կ'ունե-
«նայ»:—Ահա այս եւս կարի ճշմարիտ է: Բայց թէ Աստուածային
կամքն ինչ եղանակաւ գործեր է, կամ թէ երկնային մարմնոց
ի նպատտ՝ կենագործ արարչութիւնը կրկնել է, թէ ոչ, զասնք
անդիտանալն կամ հետազօտելը՝ բուն գիտութեան սահմանէն բո-
լորովին դուրս է: Գիտութեան գործը չէ քիչ մը արժէք ունեցող
փաստեր յառաջ բերելու. ջանալով ցուցնել թէ սրայտի վիճակի
եւ հանդամանաց մէջ կը գտնուին ինչ ինչ տոտեղք, եւ թէ հո-
զագնտիս պէս կենդանի էակներ կը պարունակին, թէ ոչ, այլ նա
պարտի ճգնիլ ճանչնալու համար թէ աստեղաց ներքին կազմու-
թիւնը ինչ է, թէ արդեօք նոքա ունին մթնոլորտ եւ այս մթնո-
լորտի ընտրութիւնը ինչ է. թէ ո՞րչափ արեգակնային ջերմութիւն
կրնան պարունակել եւ այլն, եւ այլն: Նամնապէս գիտութեան

գործը չէ Ծննդոց խօսքերը մեկնել, եւ գերմանացի աստղաբաշխին հետ ըսել թէ «ըստ անձուկ իմաստի Ս. Գրոց, երկիրս եւ «մարդն իբրեւ արարչութեան վերջին բառ նկատուելու են, եւ «այն դադարին» որ կ'ըսէ թէ ուրիշ բանական էականեր եւս կըրճան լինել ի գոյութեան՝ հարկաւ ի բաց թողուելու են»:

Այսպիսի ասացուած մը՝ որ բոլորովին արտաքոյ դիտութեան է, երկու զանազան դիտողութեանց կը կարօտի:

Եւ նախ՝ ճիշդ է արդեօք ի մեկնութեան Ս. Գրոց-ըի սա ոչ եւս է բուն դիտութիւն, այլ մեկնութիւն-թէ, յանուն Աստուածաշնչի, երկիրս եւ մարդն իբրեւ արարչութեան վերջին բառ նկատուելու են: Ընդհանրապէս խօսելով եւ ըստ իմաստին գերման աստղաբաշխին, կրնամք արձակ համարձակ պատասխանել թէ, ոչ:

Ճշմարիտը սա է որ Ծննդոց գիրքն, որ իսրայէլի ժողովրդեան համար գրուած է, եւ նորա սիկզնն ու վախճանը անոնց տրվեցնելու նպատակն ունի, արարչութեան պատմութիւնը այն տեսակէտով միայն կ'ընէ՝ որ կը վերաբերի մարդուն, եւ մի միայն մարդուն: Այս նկատմամբ՝ ճիշդ է ըսելն թէ երկիրս, իւր բուսային եւ կենդանային ամբողջ ու կատարեալ զարգացման հասած լինելովն, արարչութեան վերջին կէտն էր նկատմամբ ճարտայ: Այդ առանձինն եւ անձուկ տեսութենէն դուրս, Աստուածաշունչի մէջ բան մը չկայ, որ ձգտի նուազեցուցանել զտարածութիւն աւրաջագործութեան Աստուծոյ, որ՝ ինչ որ ինքն հաճեցաւ զայն միայն մեզ յայտնեց:

Ապա ուրեմն, աստեղաց բնակելիութեան ենթադրութեանը դէմ, յանուն Ս. Գրոց եղած առարկութիւնը արժէք մը չունի: Ընդհակառակն, ամեն ընդարձակութիւն չնորհուած է մեր երեւակայութեան ենթադրելու համար, եւ դիտութեան ստուգելու համար, -եթէ երբեք կրնայ ստուգել-, բնախօսական կինաց գոյութիւնը ամեն երեւակայելի ձեւերովն թէ՛ մեր արեգակնային գրութեան մոլորակայ մէջ, թէ՛ ուրիշ աստեղական պետութեանց մէջ:

Երկրորդ դիտողութիւնը կը վերաբերի այն թերեւս անգլտակից չիտթութեան՝ զոր, բարէ՛, շատեր կ'ընեն, եւ զոր մեք անցողակի իմն եղանակաւ ի վեր հանել կ'ուզեմք:

Կենաց ծագման վրայ խօսելն եւ երկրագնախի վրայ նորա սկզբնաւորութիւնը ստուգելն յետոյ, աստեղաց բնակելիութեան հեղինակն՝ առանց զանազանութիւն եւ խտիր մը դնելու ի մէջ


այն այլ եւ այլ կերպարանաց ըստ որոց կեանքն կուզայ ի յայտ, կ'անցնի ի սիրոյն աստեղաց «տւրիչ բանական էակներով» ընակուած լինելուն գաղափարին: Որմէ կը հետեւի թէ, ս' եւ է մոլորակի վրայ բնախօսական (physiologique) կենսոյ սկզբունքը մի անգամ ընդունուելուն պէս, բանական էակաց գոյութիւնն ալ ի հարկէ գհեա կուգայ, իբր թէ սոցա՝ եւ բուսային կամ կենդանային բնութեան մէջ տարբերութիւն մը չ'ըլլայ: Առանց խնդրոյս խորը միջամուխ ըլլալու, զիտենք հոս թէ, երկրաբանութեան եւ հնէաբանութեան (paléontologie) տուած ամենատոյգ տեղեկութեանց համեմատ, երկրաբանութիւն վրայ կեանքն՝ իւր ամեն բուսային եւ կենդանային ձեւերովը, մարդուս երկրիս վրայ երեւալէն բիւրաւոր դարեր յառաջ ի գոյութեան եղա՝ է:

Այժմ զիտութիւնք առ հասարակ համաձայտ են հաստատուելու թէ հնակենդանական (paléozoïque) դարուց մէջ դանուած դործարանաւոր էակաց առաջին հետքէն՝ մինչեւ չորրորդական դար (age quaternaire), յորում մարդս երեւեցաւ, 80 միլիոն կամ առ առաւելն 100 միլիոն տարիներ անցած են: Այս թիւէն մի քանի միլիոն տարիներ ղեղչելով հանդերձ, ի՞նչ պիտի ըլլայ նկատմամբ մարդուն, որոյ առաջին անգամ հողաբնութիւն վրայ ի յայտ գալէն մինչեւ ցայժմ, հազիւ ութ կամ տասն հազար տարիներ անցած կրնան ըլլալ:

Ապա ուրեմն, եթէ ինչ ինչ մոլորակաց վրայ կեանքի կարելիութիւնը օր մը զիտնականապէս հաստատուելու ըլլար, կը տեսնուի թէ զեռ շատ հեռի կը մնայինք անկից եղբակացունելու համար թէ, բայ ի բուսոյ եւ կենդանեաց, մեզ նման բանականութեամբ օժտուալ էակներն ալ կ'ողեւորէ այդ կեանք:

(Շարայարեյի)

ՅՈՎՀ. Վ. ԲՕԼԱԹԵԱՆ




ԿՐՕՆԱԿԱՆ

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Փրանսայի հռչակաւոր des Deux-Mondes հանդէսն, որ կղերականութեան կուսակից ըլլալէ շատ հետի է, քրիստոնէական դատախարակութեան եւ ուսուցչութեան կարեւոր խնդրոյն նըկատմամբ այսպէս կը խօսի:

«Այն ամէն մեռնարկութիւնն՝ զոր կառավարութիւնն կը կատարէ ի դպրոցս, յուսումնարանս, եւ ի համալսարանս ընդդէմ քրիստոնէական ուսուցչութեան ու դատախարակութեան, կը դառնայ ի շահեւ յօգուտ յեղափոխական ընկերվարութեան: Եւ յիրաւի, յերկուց մին է, կամ այն է որ՝ քրիստոնէութիւնն է յատենական եւ հետեւաբար ընկերական ճշմարտութիւն, եւ ըստ հետեւորդին՝ յամենայն ժամ եւ յիւրաքանչիւր քայլափոխի պետք է որ մանկանց դատախարակութիւնը անկից ներշնչուի եւ տոգորուի. եւ հասարակ է ուսուցչութեամբ քրիստոնէայ դատախարակներ անոնց տրուին, եւ, այսու եղանակաւ, չեզոք կոչուած դպրոցն ջունի նշանակութիւն, այլ անհետեւութիւն է եւ յիմարութիւն. եւ կամ այն է որ քրիստոնէութիւնը չէ ճշմարտութիւն եւ յայնժամ ընկերվարութիւնն իրաւունք ունի: Ուստի, ե՞րբ պիտի իմանան եւ ի միտ առնուն քե, դարուս հետեւած դպրոցական քաղաքականութեամբ, մի այնպիսի ընդարձակ ճանապարհ բացին, ընդ որ պիտի անցնի ընկերվարական յեղափոխութիւնը, որ ոչ ինչ պիտի շինէ եւ կործանում եւ եք պիտի պատճառուէ: Ապաքեմ, պետք է անշուշտ ընկերական նորոգում մը, բայց «ոյն ոյն նորոգումն պիտի կարարուի է յետն Աւետարանի կամ Բնաւ պիտի զկարարուի:»

Այսպէս հաճելի է մեզ տեսնել թէ des Deux Mondes հանդէսն անուղղակի կերպիւ իրաւունք կու տայ Վեռն ԺԳ. Սրբ. Քահանայապետին ընկերական խնդրոյն նկատմամբ տուած հըրահանգայ եւ Վարդապետութեանց:



ՈՒՂԵՐՈՐ ԱՂԱԻՆԻՆԵՐ



Պատմադիտաց ծանօթ է թէ, ի հնունս, ստիպողական լուրեր եւ թուղթեր առաքելու համար, ուղևոր աղանձիներ կը դործածէին, այսմ յապացոյց՝ յիշենք ասա ինչ ինչ իրողութիւններ, եւ թերեւս բազմաց անծանօթ տեղեկութիւններ տանք:

Սրբազան Պատմութիւնն մեզ կ'ուսուցանէ թէ աղանձի մը իւր բերանը ճիթենուց ճիւղ ունենալով դարձաւ ի ասպանն, որով Նոյ իմացաւ թէ ջրհեղեղն վերջացած էր:

Եղիպտացի եւ Ելլատացի նաւախարք, սոյն համակրելի բանբերաց միջոցաւ, իրենց վերդաստանաց կը ծանուցանէին իւրեանց մերձաւոր վերադարձը այն հեռաւոր ափունքներէն, ուր երկար նաւախնայութեամբ դացած էին:

Հոռոմայեցիք եղան, որք, կարծեմք թէ, դառաջինն, այս թռչունները դործածեցին զինուորական պիտոյից: Ասոնց միջոցաւ, հռովմէական պետութեան զօրագլուխք իւրեանց արշաւանաց ալ եւ այլ հանգամանքը, իրենց տարած յալթութիւնները կամ պարտութիւնները Լատինի մայրաքաղաքին կը ծանուցանէին:

Յամին 1575, ի պաշարման անդ Լէյդենի, ուղևոր աղանձիներն՝ Օրանսի իշխանին նկատմամբ պաշարելոց լուրեր բերին, որով նոքա պաշտպանութիւնը շարունակելու քաջակրուեցան:

Յամին 1594, Հենրիկոս Դ-ի զՓարիզ պաշարած ժամանակ, Սպանիացիք եւ Փարիզցիք իրենց գաշակիցներուն հետ հաղորդակցելու համար զանոնք մեծ յաջողութեամբ դործածեցին: Սոյն պաշարման ուշադրաւ հանդամանքներէն մին ալ սա է թէ, պաշարողք, իրենց կողմանէ բաղէներ կը դործածէին պաշարելոց անմեղ թռչունները որոտու համար, այնպէս որ երկու ճակատէն իսկ կրնար տեսնուիլ այն շահեկան սրայքալը զոր գաշակիցք երկուց կողմանց կը մղէին ընդ օդս:

Սյդ ժամանակէն մինչեւ ց1840, յորում Աւստրիացիք զՎենետիկ պաշարեցին, չեմք գիտեր թէ ուղևոր աղանձիներ դործածուած ըլլան ի պէտս պատերազմաց:

Իսկ եթէ սոյն ուշիմ թռչունները ի ճակատամարտս չգործածեցին յայլ զէպս, կրնամք ըսել թէ սոքա մեծամեծ ծառայութիւններ մատուցին վաճառականութեան:

Սյս վախճանաւ, յանդիշատակ ժամանակաց հետէ աղանձի-

ներ կը գործածուէին ի Սինէացւոյ աշխարհին. եւ ի սկիզբն դարուս նոցա գործածութիւնը տարածուեցաւ առ հասարակ յերուսպէ մինչեւ ցոյն օր՝ յորում հեռադիրն օգտակարապէս նոցա տեղը բռնեց:

Ի միջոյ բաղմամբիւ օրինակաց զմին եւեթ յառաջ բերելով շատանամբ:

Յամին 1815, Ռոչիլտի արձակած աղանիներն են որ իւր Լոնտոնի տան իմացուցին գաղղիական բանակին ի Վուաթերո կրած պարտութիւնը: Սոյն անլեհեր թռչունք, Բրիտանիական բանակին յաղթութեան լուրը կառավարութեան համեղէն երեք օր յառաջ իրենց տեղը հասան: Այս երեք աւուր մէջ զրամատուներ այնպիսի մեծամեծ եւ շահաւոր գործողութիւններ կատարեց որ նոյն օրէն սկսաւ ուշիւտեան տան անչափ հարստութիւնը:

Բայց այս թեւաւոր բաները աւելի եւս աղնիւ պաշտօններ կատարած են:

Յամին 1870, Փարիսի պաշարման ժամանակ սոցա բրած երեւելի ծառայութիւններն Եւրոպոյ զլիսաւոր պետութեանց ուշադրութիւնը հրաւիրեցին այս կերպ հարստացուցութեան վրայ, որ պաշարեալ երկրի մը համար միակ ազդու միջոցն է: Այժմ բովանդակ ազգեր՝ իրենց բնակաց մէջ ուղեւոր աղանիներ գործածելու սովորութիւնը մացուցին

Ի Ֆրանսա, կենդրոնական կայանն է Մօն Վալէրիանի ամրոցին մէջ, աղանեաց մեծ մթերանոցը հաստատուած է ի պարտիլի օգնեսուցութեան (acclimatation) որ ծանօթ աղանեաց ամենաբնախի սեռակէն շուրջ 20,000 դոյզ կը բովանդակէ, եւ որ ներքին զինանոցներն ալ լեցունելու կը բաւէ: Բայց աստի, զինարուեստական մասնագիտութիւն (Comité du génie) աղանէտանց համար կայաններ հաստատած է հիւսիսային սահմանազխոյն մէջ ՚ի Լիլ, Տուէ, Մէլիէր. արեւելեան սահմանազխոյն վրայ ի Վէրտէօն, Թուլ, Պէլֆօն, Պըզանտօն, Լանկը: Բայց Ալպեան լեռանց կողմը Ֆրանսա ունի միայն երեք կայաններ՝ որք կը գտնուին ի Լիոն, Մարսիլա եւ Բէրքլինեան, մինչդեռ Իտալիա այն կողմերը վեց զինուորական աղանէտուներ շունի, որք հաստատուած են ի Ֆէնէսթրէլլա, Էքսիլ, Ալէքսանտրիա, Բլէզանս, ի Մօն Սընի, ի Ճենովա, որոց ամենքը միացած են Կեդրոնական մթերանոցին որ յԱնդոնա:

Ի Կերմանիա, կենդրոնական կայանն է ի Պետլին, երկրորդական կայանները կը գտնուին ի Սթրասպուրկ, Գօպլէնց, Մէյ:

Բողէն, Գառաէլ, Մածէնա, Գորնիա, Թորկան, Քիէլ, Վիլհէմֆօֆ:
Ռուսիա իր պետութեան դրեթէ չորս անկիւնները հաստատած
է, ի Բեթերսպուրկ, Մոսկուա. Վարչապիա եւ Քիէլ:

Աւստրիա տակաւին կայաններ հաստատած չէ, այլ ուսում-
նասիրութիւններ կ'ընէ անոնց ամեն կարելի կատարելութիւններ
տալու համար:

Յ. Վ. Բ.

ԿԵԱՆՔ ԲԱՌԻՑ

Ի ՄԱՍՆԱԻՈՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԱԼ
ՅՐԱՆՍԵՐԷՆ ԲԱՌԻՑ ՎՐԱՅԷՆ

(Շարայարութիւն) (*)

Ընդայնումն նշանակութեանց

Թէպէտ վերոգրեալ օրինակները բաւական են նշանակու-
թեանց ընդլայնման վրայ գաղափար մը տալու, այսու հանդերձ
երբեմն բառերն ըմբռնողութեամբ կամ սովորութեամբ աւելի ընդար-
ձակ գաղափար մը կը յայտնեն, այնպէս որ բառը փոխանակ նը-
շանակելու միայն այն առարկայն որոյ համար հնարուած էր՝
զանազան ուրիշ գաղափարներ ալ կը ներկայացնէ. զոր օրինակ
panier՝ ըստ բնիկ նշանակութեան հացի վերաբերեալ նշանակելու
էր, մինչդեռ գործածութեամբ սակաւ եւ կամ կողով կը նշանակէ:
Arracher նշանակելու էր միայն արձագանքել ընել մինչդեռ հիմայ
եւել յափշտակել ի մտքով ալ կը գործածուի. payer ոչ միայն ըստ
բնիկ նշանակութեան փոխանակել կը նշանակէ այլ մանաւանդ
վճարել:

(*) Տե՛ս Պատկեր լիւ 11, էջ 287

Գերանունութիւն (Métonymie)

Այս ձևեր՝ ինչպէս ըսինք՝ շատ սովորական է. վերացեալ ի մասսօ մը թանձրացեալի կը փոխէ. զոր օրինակ eminent վերջաւորութեամբ Փռանսացի բառեր կը ցուցնեն, Ա. բայի մը վերացեալ գործը. Բ, բան մը ընկը եւ Գ. Գերանունութեամբ՝ գործին թանձրացեալ հետեւանքը, զոր օրինակ ameublement ոչ միայն կահաւորումն է այլ եւ կահ կարասիք. amusement ոչ միայն զբօսցնելն է՝ այլ՝ եւ զբօսանք, assaisonnement ոչ միայն համեմունքն այլ եւ համեմունքն: Այսպէս են նաև. allée, entrée, sortie կամ concert, pli, décor. եւ այլն:

Փոխաբերութիւն (Métaphore)

Տեսանք որ փոխադրութիւնն առարկայի մը անունն ուրիշ առարկայի մը կը յատկացնէ՝ երկուքին մէջ հանդիսութիւն (analogie) նշմարելով:

Փոխադրութեան մէջ երկու գլխաւոր կէտ կը նկատուին Ա. երկու առարկայից մէջ հանդիսութիւն մը, ըստ որում նոյն բառն երկուքին համար ալ կրնայ գործածուիլ, ինչպէս կըք plume կըք սենք՝ մեր մտայ կը ներկայանայ թէ փետուր թէ փետուրին մէկ մասնաւոր գործածութիւնը, իբրև ֆրէ՛, Բ. բառի մը իսկական ընդհանրական ընթացքը կը ըլլայ եւ յաւելուածոյ գաղափարն միայն կը մնայ: Այսպէս ստուգաբանական խուզարկութեամբ միայն կրնանք իմանալ թէ esprit (1) շուշ կը նշանակէ, եւ penser կըք:

Մոռացութիւն կամ Պիստոսութիւն

(Oubli կամ Catachrèse)

Քերականք կը պարտաւեն պիտատութիւնը, ըստ որում շատ անգամ բառ մը կը գործածէ անբնական նշանակութեամբ, զոր օրինակ կըք կըքն Գաղղիացիք un cheval ferré d'argent, monter à cheval, sur un âne, բայց եթէ հին ստուգաբանութիւնը վնասուի՝ այսպիսի տարբեր գործածութիւնը շատ բազմաթիւ են, զոր օրինակ biche բառը ընդհանրակցութեամբ երէ Վայրէ նշանակելու էր. sanglier (singulier) եղակա՞ն նշանակելու էր: Այստեղ պիտատութիւնը բառին ազատարար գործութիւնն է եւ վեղուին մէկ սլօք կը կազմէ: Սոփորութիւնը զայն կըքնուի եւ

(1) Respirer, aspirer, expirer, conspirer, soupirer, ևն:

կը վաւերացնէ: Cornet բառը՝ որ ֆրանսացւոյ մը համար «լա-
նաժ Լոզիէ կոորէ մը պատկերը կ'ընծայէ, ֆրանսերէն ուսանող
օտարի մը համար՝ փոքր եղջիւր միայն կ'ընայ նշանակելը:


Ըսինք որ բառերը առարկայից պատկերներն են, բայց մեր
բնական կազմը, մեր առած զատոխարակութիւնը, մեր ըրած
ընթերցմունքը կամ ուղեւորութիւնը, վերջապէս զանազան դէպք
կրնան այնպիսի կերպով աղաւորութիւն գործել մեր վրայ այն-
պէս, որ այն բառը տարբեր դադարներու կը պատկերէ 'ի մեզ.
օրինակ իմն, ենթադրենք որ խումբ մը մարդոցմէ ինչորեւի որ
գծագրեն սա պարզ բառերուն պատկերը. «ծովահայեաց ժայռ մը»
կրնանք ապահով ըլլալ թէ իւրաքանչիւրն իրեն սեփական մէկ
նշանակաւ այն պատկերը պիտի ներկայացնէ: Այս հանդամանք
թէպէտ կերպով մը լեզուին մէկ թերութիւնը կրնայ համարուիլ,
կը Նեքէն սակայն մատենադրին բան մը զրեւ, անոր գործն է այս
զանազան բացատրութեանց մէջէն ընտրելագոյնն առնուլ եւ յո-
րում կը կայանայ հեղինակին արժանիքը:

Յօդուածոյ փոփոխութիւն (modification complexe)

Մինչև ցարդ բառերն ուսումնասիրելենք իրենց պարզագոյն
ձևով, բայց այս պարզութիւնը դուն ուրեք կը պատահի լեզու-
աց մէջ: Ընդհանրապէս աւելի խառն ձևերու ենթակայ է զոր
լուծել պէտք է. այս ձևերը կրնան գլխաւորապէս երկուքի վի-
րածիլ, ճառագայթումն (le rayonnement) եւ շղթայումն (en-
chaînement):

Ա. ճառագայթումը տեղի կ'ունենայ երբ առարկայ մը իւր
անունը կուտայ շատ մը ուրիշ առարկայից, շնորհիւ որպիսու-
թեան մը որ ամենուն ալ հասարակ է: Անունը նախնական ա-
ռարկայէն միւսոց վրայ կը ճառագայթէ: Օրինակ, racine (արմատ)
բուսոյ մը, կ'անցնի քառէ, անտի չարեաց մը, յետոյ զբահաշուա-
կան Բանակոմիտան մը, որովհետև քառը, չարէ, զբահաշուական
Բանակոմիտանը նկատուած են իբրև նախնական տարեր մը զար-
գացումը, զոր տունիկ մը արմատին կը նմանցնեն: Նոյնպէս
dent (ատամն) իւր ձևին նմանութեամբը կ'անցնի սղոցի մը,
տանթիկի մը, նոյն իսկ փղին. ենթադրենք որ Ն անունն ըլլայ Ա
առարկային անունը. Ա որպիսութիւն մը զոր կը նկատենք Աին
մէջ, այսու Ն անունը պիտի անցնի Բ Գ Դ Ե Զ Է եւ այլն զա-
նազան առարկայից՝ շնորհիւ այն ա որպիսութեան՝ զոր այն առար-
կայից իւրաքանչիւրն ունի ա 'ի միջի այլոց:


Հետևեալ սլաօտիերը այս ծաղմանց եղանակը կրնայ ներկայացնել:



Նրբեմն լեզուն միեւնոյն Ն առարկային մէջ երկու կրեք կամ աւելի յատկութիւններ կը նկատէ, եւ այն անունը կ'անցնէ զանազան առարկայից, որք Աին հետ առնչութիւն ունենալ կը համարուին, մին Ա յատկութեամբ միւսը Բ. ուրիշ մը Գ եւայլն:

(Շարայարեյի)

Թ. ԹԻՐՉԵԱՆ



ՊԱՏԿԵՐ տասն և մինգ օրը մի անգամ կը հրատարակուի :

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց և՛ օտար երկիրներու համար
բոլորատարի ծախքն ի միասին հաշուելով 50 « «

Իշխարանցիքի քիչ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերա , Եւլիլ փողոց
թիւ 1 , ուր պետք է դիմել բաժանորդագրութեան և՛ քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر